Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
√ 500

ԳԻՒՑԱԶՈՒՆՔ

ԸՍՏ ԹՈՐԵՆԱՅԻՈՅ

ՀԱՅԿ, ԱՐԱՄ, ՎԱՀԱԳՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Ա. Մ. Ե. Պ.



ՏՓԽԻՍ

ՏՊԱՐԱՆ ՄՈՎՍ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.

1881

Дозвол. цензур., 5 Января 1881 года, г. Тифлисъ

Типог. М. Варданянца и К° на Ганов. ул. д. № 10

28.500

4500-60

ՊԱՐՈՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԻՄԷՈՆԵԱՆ ԲԱՐՍԱՄԵԱՆԻՆ

Ի ՆՇԱՆ ՇՆՈՐՀԱԳԻՏ ՍԻՐՈՅ

ԵՐԿԱՍԷՐՆ



ԲԵԼԵԱՆ ԱՇՏԱՐԱԿԸ

ԵՒ

ՀԱՑԿ

—Աշխատեցէք, մարդիկ. շինենք աշտարակը, մինչեւ որ ծայրը երկինք հասնի։

Աշտարակը պիտի կռուէր Աստուծոյ դէմ, պիտի կռուէր հեղեղների ու քամու դէմ։

Մեղքը ուզումէր Պատժէն չվախենալ։ Անօրէնը մի անգամ ջրհեղեղով պատժուեցաւ, այժմ ուզեց աշտարակի մէջ ամրանալով՝ անօրէնութիւնը գործել, առանց ջրերի անդունդներէն վախ ունենալու։

Բէլ, այն մեծ Տիտանը, նայելով գործի եռ գալուն եւ աշտարակի դէպի ամպերը բարձրանալուն, իւր մութ սրտի մէջ ուրախանումէր։ «Այս մարդիկը, որ այսքան եռանդով աշխատումեն, անգիտաբար ինձ

համար Գահ են շինում իրենց համար Բանդ»։ Մարդոց միամտութեամբ իրենց ձեռքով իրենց համար թակարդ շինելը ժպտեցուց նենգամիտ Տիտանին։

Թոյն թագցնող ժպիտը նշմարուեցաւ։

Նորա կողքին կանգնած էր մի Հսկայ, հաստաբազուկ, աչքերն արծուի, ճակատն երկնքի դէմ։ Հսկան տեսաւ Տիտանի սրտի մութը, ըմբռնեց ժպիտի գաղտնիքը։

Մի Գիշեր։ Եւ այդ Գիշերը յղացաւ Ազատութիւն ընդդէմ Բռնաւորութեան, եւ, Բարի Լուսոյ հետ, Խարտեաշ Մանուկը ծընաւ յաշխարհ։

Դեռ լուսիմութ էր, մարդոց մէջ մի աղմուկ էր պրծել, մի աղմուկ՝ որ ոչ ոք ոչ ոքի ասած չէր հասկանում։ աշտարակը փուլ էր գալիս, փոշին բռնել էր երկինքը. կոփկոփոց, կործանման որոտ, զէնքերի շաչիւն ու կայծակ, սմբակների դոփիւն, պղընձների գոռ ու գոչ, բոլոր իրար էր խառնուել, իրար վրայ ընկել, տակն ու վրայ եղել. երկինք առանց ամպի որոտ էր արձակում, շանթեր վայր թափում։

Մէկ կողմից այդ. միւս կողմից մարդիկ խմբերով խառնիխուռն ցրուում էին այդ կողմ։

Հսկան իւր տնով գնում էր դէպի հիւսիս։ Ամենեւին յետ չնայեցաւ։ Վախ չունէր։

Բէլ, իրեններով ապուշ մնացած, բացատրել չէր կարող պատահածը։ Ինչո՞ւ համար սարդը քանդում էր ոստայնը, իւր ցանցը։ Ինքը իւր խորհուրդն ոչ ոքի վեր չէր հանած. ի՞նչն ուրեմն կարող էր պատճառ լինել իւր յանկարծ այդպէս խաբուած մնալուն, իւր բարձրամտութեան այդ կերպ ինքն իրանում խայտառակուելուն։ Այսպէս խռոլուած ո՞ւր են գնում այս մեղուներն՝ այսքան դիակ թողնելով, եւ բոլոն իրենց ետեւից աւեր։ Չէր կարող ապշութիւնից սթափուիլ, խելքը գլուխը ժողովել եւ մտածել։

Մինչ նա դանդաչում էր, ցնորուում էր, գնացողները գնում էին։

Հսկան գնաց, գնաց, կտրեց ահագին սարեր, անցաւ նոցա յետեւը՝ ամրացաւ, անցքի վրայ պահապաններ դնելով։ Նստաւ ազատ հողի վրայ, շինեց տուն, տնկեց այգի, ձգեց մայրի, հերկեց գետինը, հանեց առու, դաշտերն ու սարերը ծածկուեցան անասունների հօտերով. Բարութիւնն եկաւ Ազգարարութեան հետ Հսկայի յարկի

տակ բնակակցելու. սեղան կանգնեցին Աստ-
ծուն։

Ջրերն, ականակիտ, արծաթափայլ կար-
կաջաձայն իջնում էին, գիլ քարերի հետ
համբոյր համբուրի տալով, իրար գաւակ
թռնելով, ծիծաղելով ծաւալուելով. իջ-
նում էին մերթ ամպածրար մերթ լուսա-
ժպիտ գագաթներէն վայր, կանգ առնում
հանգստանում դարեւանդների վրայ, լճեր
կազմում գեղեցիկ լողարաններ, եւ ապա
դարձեալ իջնում՝ դաշտ ու հովտի մէջ ընկ-
նում եւ արեւի հետ հողի ծոցում գրկուե-
լով կեանք ու կենդանութիւն ամէնուրեք
սփռում։

Հսկայի տունը ծլում ծաղկում ու
բարգաւաճում էր։ Իւր կոյսերը գեղեցիկ
էին, իւր պատանիք արեւի հետ մրցում։
Աղջիկներն իրենց լողարանների մէջ յաւեր-
ժահարսունք էին երեւում եւ տղայք իրենց
նժոյգ երիւարների վրայ հրեղէն մարդիկ։

Բարին այդ տան մէջ էր։

Մի օր, մէկ էլ տեսնես մի ահագին
փոշի, գագաթն ամպերն հանած, թեւերն
արեւելք ու արեւմուտք փռած, ոտք առել
ու գալիս է դէպի հիւսիս։ Հսկայի դրած

պահապաններն զգում են ինչինչոցը, եւ
լուրը, ասես քամու թեւերի վրայ, հասցը-
նում են Քաջի ականջը. «Իմացիր - ասում
են - Տէր, որ Բէլ, ահագին հսկայակոյտով,
անճռռնի քաջերով, հեղեղի նման պրծել ու
գալիս է մեր տուն ու տեղը սրբելու ու
տանելու սպառնալիքով։ Մենք տեսանք ու
քեզ հաղորդում ենք. ինքներս էլ ժողո-
վուելով ու երթալով թանձրանալով գալիս
ենք մաղապուրծ. Դու գիտես անելիքդ»։

Այս բօթը երթալով ու ստուարանալով
եւ վիթխարի մարմին առնելով, ինչպէս մի
փոքրիկ գոլ որ, սարի խառոյէն ծնունդ
առնելով, յանկարծ ձգուում տարածուում՝
հրէշաւոր հասակ առնում՝ երկնքի տակ
փռուում ու երկրի վրայ խաւար է սփռում,
տարածուեցաւ եկած ճանապարհի վրայ այս
ու այն կողմ եւ յուղմունքն ու շփոթը ձգեց
երկրի մէջ։

Համբաւի հետ նաեւ ժողովրդեան խառն-
իխուռն դէզը հասաւ Քաջի մօտ։ Ամբոխը,
սրտատրոփ, ուզում էր իմանալ թէ ո՞ւր է
փրկութիւնը, ի՞նչ է մտածում անել Քաջը,
իրենց նահապետը։ Սաստիկ յուզուած ահա-
գնագոչ ծովի էր նմանում այդ ամբոխը,
այնպէս ծփում այնպէս մռնչում էր։

Երբ Հսկան, իւր հարազատներէն շուրջ պատուած, երեւցուց գլուխն, ամբոխի աչքին, ամէնի վրայ բարձր, ձայները՝ քրնատ՝ կորան, իւրաքանչիւր մարդ միայն ականջ էր լսելու համար։

«Ի՛մ ձագերս—խօսեցաւ Հսկան—Ցիտան չէր կարող մոռանալ թէ ինչպէս մենք փլուցինք իւր խարդախ մոքով սկսել տուած շէնքը, որի մէջ, եթէ աւարտուէր, եւած բարձրացած՝ ցանկանում էր իրեն հետ հաւասար մեւնոյն որովայնէ ծնուած մարդիկը ստորեւ, իւր ոտի տակ նշմարել, իսկ իւր անձը շատ բարձր ու Ցիեզերական Աստուծոյ կողքին տեսնել։ Ցիտէի որ նա այդ բանը չէր մոռանալ եւ մի օր պիտի աշխատէր վրէժը հանել, ուստի եւ ես աշխատեցայ ձեզ աղատ ու բարութեան մէջ ապրելու համն զգացնել։ Արդ դուք, որ հասկացած էք այդ, պաշտպանեցէք ձեր դաշտերն ու ձեր տունն, ձեր կանայքն ու ձեր կոյսեր բռնաւորի աւարառութենէն ու յափշտակութենէն։ Նա միայն ուժն ունի իւր կողմը ու վարձուած հրոսակներ։ Դուք ունիք իրաւունքն ու անձին պաշտպանութիւնը, որոնք տանտապատիկ աւելի պէտք է ուժ տան ձեր թեւերին։ Համարձակ եղէք

Անիրաւի դէմ, եկէ՛ք իմ ետեւէս եւ ես ձեզ շուտով ցոյց կուտամ բռնաւորի երեսը»։

Աւարտեց թէ չէ ամբոխի հաւանութիւնը, գովքն ու խրախուսանքը գոռոգեցին օդը իբրեւ բազմակուտակ ամպերի մէջ երկայն ու ձիգ սրոտմունք։ Հսկայի ահեղ կերպարանքը փայլատակում՝ հառակը վեր ու վեր էր բարձրանում ու գլուխն ամպերին առնում։ Ամբոխն, որի աչքին նա այդպէս երեւաց այդ բոպէին՝ մի անյայտ ուժից մղուած՝ իբրեւ մի մարմին՝ ծնկի եկաւ եւ «Ո՛վ Դու» ասաց՝ «քու ձեռքիդ տակ ժայռերն ու յաւիտենական սառնակոյտերը ճանկելով՝ մենք նաեւ Մասիս կը վերելակենք՝ նորա գագաթէն աստուածացեալ բռնաւորին՝ եթէ նա այնտեղ անգամ հասած լինի՝ Անգունդի մինչեւ անյատակ տակը գահավէժ հոսելու համար։ Հրամայէ՛՝ ո՛վ Քաջ, մենք այստեղ ենք Կորդուաց լեռները իրենց հիմունքներէն խլելու եւ իւր գլուխը մինչեւ երկինք դիզացուցած՝ եւ իւր ոտները մինչեւ գժոխք իջուցած բռնաւորի գագաթին նետելու համար։ Ասա՛ մեզ՝ պէ՞տք է ազի ծոմը իւր տեղէն հանել ու նորա ոզոզների մէջ Բէլեան Հսկայակոյտը իւր բոլոր աշխարհով ընաջինջ անել։ կը հա-

նե՛նք, կանե՛նք, Աստուա՛ծ է վկայ»։ Եւ ձայնը լսուում էր, եւ շարժումը տեսնուում էր ինչպէս լերանց մայրիներինը, երբ նոցա մէջ շղթայաղերծ քամին է վազում։

Ո՞վ Աստուած, ո՛րքան հզօր է մարդը, երբ զգում է շունչդ իւր ծոցում։ Դու նորան մերկ ու տկար ստեղծեցիր, ու նորա կողքին դրիր առիւծն ու ցուլը, վիշն ու վարազը, վիշապն ու լեվիաթանը, անգղն ու արծիւը. երկիրը իւր հրաբուխներով նորա ոտի տակ, եւ երկինքը իւր շանթերով նորա գլխի վերեւ. մի կողմը անյատակ եւ անեզր ծովը տարածեցիր, եւ միւս կողմը արձանացուցիր ահագին եւ յաւերժական սառնամանիքը, եւ ոտի տակ պեղեցիր դժոխաբերան վէները։ Նա նուաճեց գազաններն ու իրեն ծառայեցուց, ձեւեց գետինը, ակօսեց ծովը, կապեց վէները, պատառեց օդը, եւ հարցուց ամենին թէ «Ո՛վ էք դուք», «Ի՛նչ էք դուք». եւ շարունակում է նուաճել, եւ շարունակում է հարցնել։ Նորան կարելի է յաղթել միայն քնի մէջ կամ յանկարծակի վրայ տալով։ Այլապէս անյաղթելի է։ Նա ունի Հանճարը, նա ունի Կամքը, նա ունի Միաբանութիւնը. եւ այդ երեք բանը, այդ դու ինքդ ես, ով Սուրբ

Երրորդութիւն, ո՛վ Աստուած, որ ստեղծել եւ կառավարում ես ամէն բան։ Ե՞ս դու երբէք յաղթելի։ Քու անթափանց գաղտնիքներիդ մէջ մի ուժ ստեղծեցիր աւելի զօրեղ քան նա, «Մահը»։ Բայց նա, նորան տուած հանճարովդ, դորան յաղթելու ճարը ն էլ արաւ. գնաց Ընկերսիրութեան, Հայրենասիրութեան եւ Մարդասիրութեան ծոցէն հանեց բերեց Անմահութիւնը, եւ, այդ վահանով զինուած, կռուի կանչեց նաեւ Մահը։ Դորան էլ յաղթելէն վերջը, Մարդոյ Որդին վերացաւ բարձրացաւ մինչեւ քու Գահդ եւ «Այժմ պսակէ ինձ-ասացո՛վ Հայր, քու պսակովդ»։ Ահա նա քեզ մօտ է, յաւիտենական է։

Մի քանի օր սաստիկ որոտներէ, կայծակներէ, մրրիկներէ եւ ողողներէ վերջը՝ յանկարծ սեւադէմ թուխպերը ծուէն ծրուէն պատառուեցան եւ գեղածիծաղ արեւի շողերը եօթնգունեան գօտիէն անոյշագեղ Անեղնակէն, երկրի վրայ կաթեցին. վարդն ու շուշանը, ծառն ու թփիկը փայլիլ ու շողշողալ սկսան մարգրիտներով, ադամանդներով եւ ամենազան գոհարներով. օդն անապակ էր ու թափանցիկ՝ որպէս ոչ մի ան-

նման բիւրեղ անձաւներէն դուրս վազեցին եղնիկներն ու եղնորթիկները վազելով ու վարգելով, այծեամներն ու այծեմնիկները ժայռերի ու վախերի վրայ դիւաբար ոստոստելով. առիւծը վերջապէս իւր մութ այրը թողնելով ելաւ լոյս աշխարհը եւ ամէնի բաշը թօթուելով մուռնչ հանեց, որից անտառը դողաց եւ քարանձաւները զարհուրագին որոտմունքներ արձակեցին, եւ այդ ահեղ ձայնէն ընութիւնը՝ կարծես սարսափելով՝ իւր բոլոր խորքերէն ու խորշերէն դուրս վիժեցուց անասնոց թագաւորութիւնը։ Ջրերը կարկաջելով ու գլգլալով վազում էին, թռչուններն ու հաւերը դայլայլիկներ ասում ու կրռ ու կրռ ձայներ հանում։ Աղաւնիները թողին իրենց թառն ու բները, դուրս թռան երդիքէն եւ օդի մէջ տաւառնում ու ճախրում են։ Նէն ու ձին էլ արդէն գոմում չեն. գառը անուշահամ սէզ խոտի մէջ խայտում ու կայտառում է։ Ի՜նչ հիանալի տեսարան, երկի՜նք։

Բայց տեսէք այն հրաշատեսիլ կերպարանքը, այն ծորան ու ծուխատեսակ աչերը, ծիծաղ ծաւալ վարդ շրթունքը, երկնագիսակ վարսն ու ծամերը. տեսէք, ի սէր Ամ-

առնծոյ, այն կարմիր վարդերով ու լուսանշոյլ շուշաններով ցանուած մագական ծոցը . . . . տեսէք տեսէք բոլոր այդ արեւները, լուսիններն ու աստղերը, այդ այր մարդիկը, կին մարդիկը, մանր ու խոշոր աղջիկն ու տղէն. բոլոր դուրս թափուել, լայն ու ուռուցիկ կուրծքերով օդն են ծըծում, հրճուում ու զմայլում, ուրախական ձայներ արձակում, վազ են վիչում ու թմբուկ զարկում։ Ծափն ու կայթիւն ամէն ուրեք։ Տեսէք այն կաթնորակ պարանոցներն, յուռութով լի, որոնց վրայ ծաւալ ու ծուփ վարսամները անոյշ շնչով թըրթռում ու խաղում են, որոնց վրայ, իբրեւ մանեակ, զարդ է նարօտը՝ Անեղնակին խորհրդանշան, կարմրից ու կանանչից, ծիրանից ու կապոյտից, նարընջից ու մորից եւ լուսամաքուր ոսկեակն՝ որ զուգում է այն երանգներն իրար հետ ու միացնում։ Դոքա՝ այդ աղջկունքն ու հարսունք՝ երամ երամ տարածուում են դաշտերի՝ հովիտների մէջ՝ շաղով ժպտուն ծաղիկներ քաղելու, փունջ կապելու ու վիճակ բանալու համար։ Միւս կողմում պնդակազմիկ պատանիներ վարդերով վառում՝ զարդարում են առաքինի եղը՝ եղջիւրները ջահազարդում Անմահի

առջեւ մատաղ հանելու համար։ Է՛լ միւս կողմում քաջաբազուկ ու թիկնաւէտ երիտասարդները, ճակատները սարդիներով պըսակած, սարդի բոլորներով ու ուղէշներով նաեւ իրենց նաւերը զարդարած, սահում են ալիքների վրայ, մրցում են իրար հետ, ջուր են ցանում իրար վրայ, ընկնում մըխըրճում են ալիքների մէջ եւ թիերի հետ թեւերի փորձն անելով՝ կրկին վերելակում են իրենց նաւերը։

Մե՞ծ օր է այդ օրը։ Այդ այն օրն է, ուր տօնուում է Հսկայի յաղթութիւնը։

Հարաւն Հիւսիսէն անջրպետող մի մեծամարմին լեռան կողի վրայ որ նայում է դէպ հիւսիս, անտառանման դիզացած է դժոխամիտ Տիտանի բանակը։ Այնտեղէն, այն բարձրէն, բռնաւորի առաջին հրամանին, այդ բուռն այդ վայրենի զօրութեամբ լցուած սեւաջուր հեղեղը պիտի վիժուի գայ ներքեւ, խորերի ու դաշտի ամբոխի ու ժողովրդի մէջ։ Եթէ այդ բռնութիւնն հասնի ու բռնէ ամբոխի հոգին, էլ ազատութիւն չկայ. սոսկալի է աւերն ու քանդումը։ Պէտք է ուրեմն յետ մղել հեղեղն որ իջնում է սեպացեալ գագաթներէն. թիկունքը դէմ դնել ձիւնակոյտին իւր գահավիժման

մէջ եւ վերթօթռուել ասելով «դարձի՛ր դէպի յաւիտենական սառնոյդ»։ բռնել, իւր մի խորշից, ահագին թափով դարահոսուող ժայռը եւ պարսել, հրամայելով որ դառնայ իւր վախուտ ապառաժների ծոցը։ Ո՛վ անհուն ախրագործութիւն։ Եւ սակայն, լեռան տակէն վեր գնացող Հսկան լեռան գլխէն վայր իջնող Տիտանին ստիպել է որ վերջոտնի, կրընկի վրայ յետ դառնայ։ Բայց այդ հերիք չէր. պէտք էր այնպէս անել որ այդ հեղեղը-այդ ձիւնակոյտը-այդ ժայռը-այդ Տիտանը էլ յետ գալ չկարողանայ. եւ Հսկան եռաթեւեան նետով գամեց Տիտանին այն սոսկալիթխար լեռան վրայ, որին նա դէմ էր արել իւր թիկունքը։ եւ խարիսխը դժոխքի մէջ գրուած, եւ գագաթը շանթերի ու ամպրոպների մէջ զետեղած լեռը այն սոսկալի Որսորդին յաւետայուշ գերեզման եղաւ։

Ահա ինչու այդ օրն եղջերուները վազում ու վարգում էին, ծխանները բարդ բարդ ծուխ հանում, մարդիկ փող փչում ու թմբուկ զարկում, աղաւնիք օդի մէջ ճախրում, նաւերը՝ սարդերով զարդարուած ծովի վրայ հանդէս գործում, պատանիք վարդավառ եղը Անմահին մատաղ հանում,

աղջկունք իրենց քաջերի վրայ վիճակ բաց անում՝ թէ ո՞ր քաջն արդեօք ո՞ր աղջկան վիճակ կ՚ընկնի։

Սարդաղարդար ծառաղարգար նաւերը կապոյտ ջրերի վրայ սահեցնող քաջ երիտասարդները այդ օրը՝ այդ գեղեցիկ Արեգական օրը տարեգլուխ ասացին, նոր տարի անուանեցին, նաւասարդ ձայնեցին, որ երկայնելու էին մինչեւ երեսուն օր։ Եւ այն այր մարդիկ՝ եւ այն կին մարդիկ՝ եւ այն տղէն ու աղջիկ՝ այդ հովիւներն ու հողագործներ՝ այդ տնարարներն ու տան յոյսեր՝ բոլորը՝ բոլորը՝ երբ Հսկան ահեղաշուք կերպարանքովն երեւեցաւ հանդէսի մէջ՝ խորին երախտագիտութեամբի եւ անհուն ապշանքով ու զարմանքով զմայլած պատեցին նորան եւ խոնարհեցան՝ եւ զգալով իբրեւ մի սիրտ՝ եւ խօսելով իբրեւ մի բերան՝ «Հայք ենք» երդուեցան՝ «Հայ.ք»։ Եւ երբ ելան կանգնեցան՝ նոր հրաշք՝ Հսկան Է՛լ իրենց մէջ չէր։

Հովիւներն ու գիշերարածները լուսավառ երկնքում՝ իրենց գլխի վերեւ՝ մի աստղ տեսնելով՝ որ մինչ այն օրը չէին գիտել՝ համբաւեցին իրենց Հսկան՝ Հայկ՝ երկնակամարում՝ նոյնպէս գինաւառ՝ նոյնպէս ճա-

ճանչաւէտ՝ ինչպէս երեւեցաւ իրենց աչքին Նաւասարդի հանդիսում։ Եւ այդ հաւատը յաւերժացաւ Հայոց մէջ։ Այսօր նա նոցա յուսոյ աստղն է։

ԱՐԱՄ

«Տղէ՛ք», դարձաւ Արամ մի օր իւր ընկերակիցներին, երբ խոր ձմռան պարապութիւնների ժամանակ, ձանձրութիւնը կոտրելու համար, մականախաղն էին անում «Տղէ՛ք, ճշմարիտ չէ՞ որ շատ ճարպիկ ենք մականը ձգում թէ՛ հետի թէ՛ ձիով· տեսէք ինչպէս ծնկահար ձնի մէջ փոթորկում են մեր ձիանքը եւ ինչպէս կայծակնացայտ են մեր աչերը, մեր ձայնը հզօր՝ երբ հայն ու հոյն ենք արձակում եւ մեր բազուկներէն թռած մականը մերթ շչում, մերթ վզզում է իբրեւ վիշապ եւ իբրեւ հողմ։ Ի՞նչ էք կարծում եթէ նորա ծայրը երկաթ հագցնելու լինինք, ընդունակ չե՞նք լինիլ սոսկալի խաղեր անելու»։

Ընկերները պիշ նայում էին նորա երեսը, ինչպէս մարդիկ՝ որ լսածների իմաստը տակաւին չըմբռնած՝ բացատրութեան են սպասում։

«Երկաթածայր մականով կարող չե՞նք լինիլ արծիւների բոյնը քանդել, վիշապների

ժանիքը փշրել եւ առիւծների փորոտիքը թափել»։

—Տէր մեր Արամ,—ասացին ընկերները,—երեւում է թէ այն՝ ինչ մենք ամէն մէկս առանձին կամ քանի մի ընկերով անում ենք մեր զուարճութեանը կամ պիտոյքին համար, դու ուզում ես որ բազմութեամբ անենք։ Աւելի լաւ, անենք. բայց որքան թուերս շատ լինի, այնքան խաղերս նուազ սոսկալի պիտի լինի, եւ այդ իսկ պատճառաւ զուարճութիւններս էլ գուցէ աւելի նուազ։—

«Միթէ չէ՞ք տեսել որ արծիւը ճանկում է մեր հանուկներն ու մեր գառները եւ, հանելով երկնքի դէմ ծիծաղող ու նորա շանթերը արհամարհող ժայռի գլխին, բզիկ բզիկ է անում ու իւր ձագերին կեր տալիս։ Միթէ չէ՞ք լսել որ վիշապը կոյսեր յափշտակում, իւր քարանձաւների մէջ նոցա պղծում եւ ապա ողջ ողջ կուլ է տալիս։ Միթէ անգիտանո՞ւմ էք մայրիների մէջ տիրապետող աշն ու հոյն. դուք ուժեղ էք, շատ բարի, անց էք կենում. բայց տկարնե՛րը, անզէննե՛րը, նոցա վրայ մտածո՞ւմ էք արդեօք. արդ նոցանից շատը անհետ կորչում են ստուերոտ կաղնիների մէջ»։

Միւս ձիաւորներն էլ, երթալով խաղը թողնելով, ժողովւում էին առաջինների վրայ. եւ բարձր տանիքների վրայ խռնուած հանդիսատես ամբոխը տեսնելով մականաւորների իրար վրայ կուտուիլը, ի՞նչ է պատահում արդեօք, ասելով, ինքն էլ իջաւ վազեց եւ մի քանի ակնթարթում շրջանը երթալով լայնացաւ ու ծովացաւ։ Ի՞նչ կայ, ի՞նչ բան է, ընկեր ընկերի հարցնում էր՝ ոտերի ծայրերի վրայ կանգնելով ու առջեւը գտնուողների ուսերի վրայից ձգլտելով։ Տօ՛, ասում են թէ մեր Արամ տանուտէրը որսի է գնալ ուզում մեծ բազմութեամբ, պատասխանում էր մէկը։ Ի՞նչ ես փչում, պատասխանում էր միւսը, էս ձմռնոցով, էս միջահար ձնով ի՞նչ որսի երթալ է. հիմիկուայ որսը միայն աղուէսն ու գայլն են, էն էլ մարագներու ետեւ ակնատ դնելով կարելի է բռնել. էլ ո՞ւր գնալ ձիւնակոյտների ծոցը մտնել, բքի բերանն ընկնել. ինչ որս, ինչ բան. մի թողէք լսենք տեսնենք ինչ են ասում։

Արամ հեծած էր մի վիշապանման ձի, որ երկնքի ու երկրի մէջ կարող էր թռչել եւ իւր տիրոջ մի հօ՛փն հերիք էր նորան՝ որ նա ահագին ասպարէզ մի ակնթար-

թում կուլ տար։ Ձին գիշերի պէս սեւ էր եւ պնչերը մի զոյգ հնոց էին․ բոլոր զարդեղէնը մի պարզ սանձ էր՝ ահագին երկաթ՝ բերանում, եւ կռնըկին մի մաքուր թաղիք՝ գօտեպինդ կապուած․ թաւ բաշն եւ երկայն ագին սրսուռ սանտրուած եւ սեւ սաթի տեսակ փայլուն։ Ինքը Արամ, օրինաւոր փաղաղուած, լմուած, քերուած ու կոկուած գոմշէնին, հետեւաբար եւ բամբակի պէս կակուղը, երբեւ կապայ մինչեւ բարձերի վրայ երկայն հագած, մաշկեայ սեղմ ռունապաններ եւ չիկամորթ փափուկ տոնամաններ, այդ բոլորը ոտների, սրունների ու բարձերի վրայ մարմնի ձեւերին հետեւելով պատշաճապէս յարմարեցուցած․ քաջի պարանոցը մերկ, մերկ նաեւ լայն ճակատը, եւ գռուզիկ երկայն մազերը, շագանակագոյն, դէպի ականջների ետեւ սանտրուած եւ ուսերի վրայ ծփուն․ կերպարանքը վեհ ու վսեմ ինչպէս ամպերի մէջ գիզացած եւ անդնդնի վրայ կախ նայող ժայռինը․ երիտասարդ Արամը հաստ մականի ծայրը աջ բարձի վըրայ զետեղած եւ հզօր ձեռով նորա մէջ տեղէն բռնած ու գլուխը կողմնակի փոքր ինչ դէպի այդ ձեռը յեցուցած եւ պարանոցը աջէն դէպի ձախ թեթեւակի ոլորած եւ

դունչը քիչ հողմին տալով, իսկ սանձի փոկերը բռնում ժողովող ձախ ձեռը մատների միջին կոճիկներով ձախ բարձի վրայ հանգչեցուած, Արամ այդպէս, լայն ու շիտակ թիկունքով, բերնի երկաթը ծամող փրփրերախ Սեւի վրայ նստած, մի հրաշք էր, մի կախարդութիւն էր, ուստի եւ ամբոխը, սըրտաթունդ՝ մի այնքան սիրելի ու պաշտելի գլխու առջեւ, բոլորովին աչք ու ականջ էր դարձել տեսնելու եւ լսելու համար հայկունուն պատահածը։

Հայկայ ձագը, այդ ծխաշունչ մորուկը, որ միայն սիրում է օդի ազատութիւնը եւ դաշտերի ընդարձակութիւնը՝ որպէս զի իւր առոյգ անդամների հրաշալի վարժութիւններն անէ, որ ատում է գոմի մութը՝ սիրելով լուսի մէջ խըրխընջալն ու քամիների հետ մրցիլն ու հրեղէն ձիերի երամակը խառնուած աստղների հետ խաղալն, այդ հայկորդի Արամն, ատում էր տեսնելով այնքան ժողովուրդ իւր շուրջը [illegible]ացած, է[illegible]րողացաւ իրեն խանձ[illegible] բոլոր անդամներովը դողաց [illegible] մի լեռ որ ցնցում է իւր կողերն երբ հուրն ու ծուխը ժայթքելու վրայ է։ Երբ այդ դողման կէտին մականն էլ պարզեց, տիրոջ սրունների

մէջ սղմուած Սեւը լցուաւ ու, յանկարծ սանձակոծուելով, ծառացաւ. այս անգամ ասես ուզում էր իւր տիրոջ համար դէպի ամպերը ճանապարհ բանալ. մի երկրորդ սանձահարութիւն նորան, բոլորովին վըշվըշոտ ու հրաբորբոք, յոռի վրայ պտոյտ անել տալով իւր տեղը դադար կանգնեցուց։ Ո՞վ սոսկալի ուժ, մի իմաստուն սանձահարութեամբ կակըղցած։

«Այ՛, ընկե՛ր ներ, ո՛վ ժողովուրդ, առաջարկում եմ փոխել այս մականախաղը. առաջարկում եմ երկաթածայր մականներով արծուեբոյն ժայռերը փշրել, վիշապամուտ անձաւներն արնոտել, գաղանաթագոյց անտառներն ոստակոտոր անել։ Մեր սահմանները վրդովուած են, մեր ցանկերը քանդուած. օդի մէջ մահ է ցանուած, քարայրները մահ են փչում, անտառներում մահ է վազում։ Այստեղ, երկրի սրտում, մենք հանգիստ ենք քնում, այնտեղ՝ եղբերներդ՝ դեւերը դժոխային հարսանիք են գործում։ Գիտեմ այս բոլորը, իմացել եմ այս բոլորը, ստոյգ են բոլորը։ Առաջարկում եմ վայրագ, արիւնկզակ, արիւնարբու գազանների դէմ մի աշխարհահանդէս մականախաղ անել, մի սոսկալի մականախաղ

անել. ուզում եմ մահով մահը խեղդել, ուզում եմ արիւնով արիւնը լուալ, ուզում եմ մականով մականներ խորտակել, ուզում եմ մեր երիւարների սալ սմբակների տակ թշնամի երիւարների սմբակները ջարդել, ուզում եմ կռիւ անել մեր խաղաղ դաշտերի վրայ կրակ ու արիւն ցանող կռուախանձ գազանների հետ, ուզում եմ կըռուել Մար Նիւքերի հետ, ուզում եմ կըռուել ասորեստանցի Բարշամի հետ, ուզում եմ կռուել Կապադովկացի Պայապիսի հետ. երրակի կռիւ երրակի գլխու դէմ. ուզո՛ւմ եմ, ուզում եմ, ուզո՞ւմ»։

Եւ այդ ահեղ ու տիրական վանկը, «ուզո՛ւմ եմ», «ուզո՛ւմ եմ», «ուզո՞ւմ», վազում ու փոթորկում էր ժողովրդեան գըլխի վերեւ։ Սրտերն ուռած էին, բաղուկները պնդուած, ոտները դադար չունէին։ Ատամները կճրտում էին. ուժն այնքան զեղուած էր անդամների մէջ, որ եթէ ծառ ելներ առջեւը արմատէն կը խլէր, եթէ ժայռ՝ օդի մէջ կը պարսէր, եթէ սար՝ վիհերի մէջ աւազակոյտ կը դարձնէր։ Ո՞վ ներշնչութիւն, ո՞վ զայրոյթ, ո՞վ ոգի քաջութեան, ի՞նչ բռնութիւն կարող է դէմդ կանգնել։

Գարնանը, Պայապիս՝ իբրեւ շան լա-

կոտ ծեծուած՝ պոչը սրունների մէջ քաշած՝ վրնկզտալով դէպի արեւմուտք էր փախչում։ փախաւ ու էլ չ՚երեւաց։

Ամռանը՝ Նիւքէր՝ ճակատէն Արմաւիրի պատի վրայ շամփրուած՝ բարկ արեւի տակ խորովուում էր։ Է՚լ ուրիշ յիշատակ չթողեց։

Աշնանը՝ Բարշամ՝ երակներէն շատ արիւն թողնելէն վերջը՝ բոլորովին ցամքաւ ու գոլորշու նման անյայտացաւ։ Հայերը՝ նորան յաւետապէս խայտառակելու մտքով՝ անունը փոխեցին Յարդգող դրին՝ եւ ուղեցին երկնակամարի վրայ մխոուած տեսնել։ Թշուառականը անբաւ համարձակութեամբ եկած է եղել Արամայ մարդներէն յարդ գողանալու՝ բայց՝ յանկարծ բանը իմացուելով՝ թողել փախել է՝ տարած յարդն էլ՝ վազելիս՝ ճանապարհին ցրրցնելով։

Աղգերը՝ հիացած ու ապշած երիտասարդ քաջի արարքէն՝ որ իւր մականովը աշխարհներ գողացուց ու սասանեցուց՝ ոչ այլապէս ճանաչեցին եւ ճայնեցին իւր տունը՝ բայց եթէ Արամենիա՝ Արմէնիա՝ եւ իւր ժողովուրդը՝ բայց եթէ Արամեան՝ Արմէն։

ՎԱՀԱԳՆ

Երկնէր երկին և երկիր՝
Երկնէր և ծիրանի ծով.
Երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղէգնիկն.
Ընդ եղէգան փող ծուխ ելանէր՝
Ընդ եղէգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր՝
Նա հուր հեր ունէր.
Ապա՝ թէ բոց ունէր մուրուս՝
Եւ աչկունքն էին արեգակունք։

Եւ դու ծնում էիր՝ եւ դու վազում էիր՝ պատանեկիկ դու հուր հեր ունէիր՝ ու աչերդ էին արեգակներ։

Երբ ծրի վրայ հրաշէկ գլուխդ երեւցուցիր՝ շանթը՝ այն բազմաթեւեան հրէշը՝ որ երկնքէն է պսակուած համարուում՝ եւ երկրի վրայ աւեր է ածում՝ շանթը թանձրակուտակ սեւ ամպերի մէջ գալարուեցաւ կծկեցաւ. տեսիլդ եւ եթ ածեց նորա վրայ բարկութիւնն ու անկարողութիւնը միանգամայն. եւ ծայրայեղ յուսահատութիւնը՝ որ այդ ժամանակ տիրեց նորան՝ աւարտ տուեց նորա գոյութեանը՝ եւ նա վազեց իբրեւ ջուր՝ եւ նա ցնդաւ իբրեւ ծուխ։

Եւ երկինքը մաքրուեցաւ վնասակարներէն, եւ երկիրը ժպտեցաւ ցողով։

Այն ժամանակ դաւ աշտանակեցիր երկնակամարը, եւ Մասիսի պատառուածքներում վերջ տուիր վիշապների բռնութեանը, եւ Կովկասի գազանաբնակ խորշերում Հերքիւլի պէս գործեցիր։ Եւ այդ ժամանակ, Մասիսը քեզ երգեց. եւ այդ ժամանակ, Կովկասը քեզ պաշտեց։

Ողջոյն քեզ, ո՛վ Վահագն աստուած։

Քանի որ քու անիւդ գլորուում է Մասիսի եւ Կովկասի վերեւով, անկարելի է թէ քու արութեանդ յիշատակը անցած լինի։ Քնի մէջ է յոգնած ու դադրած ժողովուրդը. սպասէ, ո՛վ աստուած. նա կը զարթի հանգստացած ու կազդուրուած, եւ այն ժամանակ կը սրբէ քու բագինդ ու նորից կը յարդարէ։ Եւ այն ժամանակ Մասիսը դարձեալ կըսկսի քեզ երգել, եւ այն ժամանակ Կովկասը դարձեալ կըսկսի քեզ պաշտել։

Տի՛ր, ահա բամբիռը։

Կը զարթի՛ եւ բամբռահարը։

ԾԱԽՈՒՈՒՄ Է

ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻ ՄՕՏ.

—*Սիլվիո Փելլիքոյի* ՖՐԱՆՉԷՍԿԱ ԴԱ ՌԻՄԻՆԻ-Ն։—*Դանթէի* ՖՐԱՆՉԷՍԿԱ-Ն։—*Լէօփարդիի* ԱՌ ԻՏԱԼԻԱ-Ն։—ՏԱՐՕՆՈՑ ԾԵՐԸ։ (Ա. Մ. Ե. Պ.) . . 70 կ.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱԽԱՆԹՈՒՄ.

—*Դիւցազունք*—ՀԱՅԿ, ԱՐԱՄ, ՎԺ.-ՀԱԳՆ . . . . . 30 կ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0243343